ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«13» 10 2022թ.
No 006305

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ՊԱՐՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա, 40/1, 21)

Հարգելի պարոն Եսայան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 11-ի ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և թիվ ՀԳ-01121/22 վարույթին միացնելու մասին» թիվ 382-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 382 որոշում**) հարուցել է վարույթ և միացրել թիվ ՀԳ-01121/22 վարույթին:

Ձեր լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով կարող եք երկշաբաթյա ժամկետում հարուցված վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր: Ձեր հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Կից ներկայացվում է Հանձնաժողովի թիվ 382-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «5» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Համակենտրոնացումների, պետական օժանդակության և պետական գնումների վերահսկողության բաժին
Կատարող՝ Աննա Կոստանյան
Հեռ՝. (+374 60) 830 840 (233)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 27 հոկտեմբերի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 382-Ա

««ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ԹԻՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՀԱՅԿ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՎԻԿԻ ԵՍԱՅԱՆ» ԱՆՁԱՆՑ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ ՀԳ-01121/22 ՎԱՐՈՒՅԹԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 11-ի նիստում, քննարկելով ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի (այսուհետ նաև՝ **Անձանց խումբ**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և թիվ ՀԳ-01121/22 վարույթին միացնելու մասին հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 14-ի ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 223-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-01121/22 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ 01121/22 վարույթ**): Թիվ ՀԳ-01121/22 վարույթի ժամկետը Հանձնաժողովի սեպտեմբերի 13-ի թիվ 329-Ա որոշմամբ երկարաձգվել է եռամսյա ժամկետով:

Հանձնաժողովը թիվ ՀԳ-01121/22 վարույթը հարուցել է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **«Յուքոմ» ընկերություն**) 2022 թվականի մայիսի 13-ին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) առերևույթ խախտման մասին հաղորդման հիման վրա՝ Անձանց խմբի կողմից անբարեխիղճ մրցակցության կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմանների և պարտավորությունների չկատարման հատկանիշների հայտնաբերման առիթով:

«Յուքոմ» ընկերությունը 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Օրենքի առերևույթ խախտման մասին նոր հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) է ներկայացրել Հանձնաժողով:

Հաղորդմամբ մասնավորապես նշվել է, որ դեռևս լուծված չհամարվելով Թիվ ՀԳ-01121/22 վարույթի շրջանակներում բարձրացված խնդիրը, «Յուքոմ» ընկերությունը ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանի և Ալեքսանդր Հովիկի Եսայանի գործողությունների հետևանքով կրկին առերեսվում է լուրջ խնդիրների: Մասնավորապես ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը շարունակում են «Յուքոմ» ընկերության նկատմամբ դրսևորել հակամրցակցային, անբարեխիղճ վարքագիծ՝ չարաշահելով իրենց իրավունքները, դրանով իսկ «Յուքոմ» ընկերությանը պատճառելով հսկայածավալ ֆինանսական վնասներ:

Դեռևս Թիվ ՀԳ-01121/22 վարույթի շրջանակներում նշվել է, որ

Միաժամանակ նշվել է, որ թեև «Յուքոմ» ընկերությունը կարծում է, որ Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 9-ի «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական և «Թիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համակենտրոնացումը պայմանով թույլատրելու մասին» թիվ 282-Ա որոշման (այսուհետ՝ **Որոշում**) դրույթների համակարգային վերլուծության համաձայն՝ չունի պարտավորություն համապատասխան բաժնետերերին ծանուցելու արտահերթ ժողովների տեղի ունենալու փաստի մասին, այնուհանդերձ «Յուքոմ» ընկերությունը պատշաճ ծանուցել է դրանց տեղի ունենալու ժամանակացույցի և օրակարգի մասին, ինչի վերաբերյալ կարծիք է հայտնել նաև Հանձնաժողովը:

Այսպիսով, այն փաստը, որ ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը հանդիսանում են «Յուքոմ» ընկերության մրցակից հանդիսացող մեկ այլ ընկերության բաժնետերեր, թույլ է տալիս ենթադրել, որ վերջիններիս գործողություններում առկա է դիտավորություն՝ իրենց գործողություններով նպաստելու «Յուքոմ» ընկերության շուկայում ունեցած դիրքի թուլացմանը կամ հանգեցնելու «Յուքոմ» ընկերության կանխամտածված սնանկացմանը կամ լուծարմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի և Օրենքի 7-րդ գլխով նախատեսված անբարեխիղճ մրցակցության դրույթները, «Յուքոմ» ընկերությունը գտնում է, որ ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը իրենց անբարեխղճ գործողություններով չարաշահում են իրենց իրավունքները:

Միաժամանակ, հիմք ընդունելով Օրենքի 76-րդ և 77-րդ հոդվածները՝ «Յուքոմ» ընկերությունը խնդրել է ներկայացված Հաղորդումն ընդունել տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման

առիթ և որպես շարունակական անօրինական վարքագծի դրսևորում կիրառել խիստ պատասխանատվության միջոց՝ ընդհուպ մինչև քննարկման առարկա դարձնելով Որոշման ուժը կորցրած ճանաչումը կամ դրանում փոփոխությունների իրականացումը:

Միաժամանակ խնդրել է հանձնարարել վերացնելու տնտեսական մրցակցության բնագավառում ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանի և Ալեքսանդր Հովիկի Եսայանի կողմից թույլ տված խախտումները, այդ թվում՝ որպես վերջիններիս կողմից «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության իրական շահառու դառնալու Հանձնաժողովի համաձայնության պայմանների շարունակական տրամաբանական դրսևորում,

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Տվյալ դեպքում Անձանց խմբի կողմից

գործողությունները առերևույթ պարունակում են անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ

ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն իր որոշմամբ կարող է մեկ վարույթի շրջանակներում միացնել միևնույն սուբյեկտի կատարած՝ մեկից ավելի ենթադրյալ խախտումների կամ մի քանի սուբյեկտների կատարած նույն կամ համասեռ խախտումների վերաբերյալ վարույթները, եթե այդ վարույթների միջև առկա է փոխադարձ կապ, և դրանց համատեղ իրականացումը կարող է ապահովել վարույթի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Վերոգրյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նույն սուբյեկտի կատարած մեկից ավելի խախտումների վերաբերյալ վարույթը Հանձնաժողովի որոշմամբ միացնելու համար որպես պայման է սահմանել վարույթի առավել արագ և արդյունավետ լուծման ապահովումը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը թիվ ՀԳ-01121/22 վարույթը հարուցել է Անձանց խմբի կողմից անբարեխիղճ մրցակցության կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմանների և պարտավորությունների չկատարման հատկանիշների հայտնաբերման առիթով:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ սույն վարույթը թիվ ՀԳ-01121/22 վարույթին միացնելը կապահովի դրանց առավել արագ և արդյունավետ լուծումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ««Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, «Թիմ» փակ բաժնետիրական ընկերություն, ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայան և Ալեքսանդր Հովիկի Եսայան» անձանց խմբի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ և միացնել թիվ ՀԳ-01121/22 վարույթին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հոկտեմբերի 11
Երևան